

## ՄԱՐՔՍԻԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼԵԶՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Մի խումբ երիտասարդ ընկերներ դիմել են ինձ, առաջարկ անելով մասնավորում իմ կարծիքն արտահայտել լեզվագիտության հարցերի վերաբերյալ, հատկապես, այն մասում, որը վերաբերում է մարքսիզմին՝ լեզվագիտության մեջ: Ես լեզվագետ չեմ և, իհարկե, չեմ կարող լիովին բավարարել ընկերներին: Ինչ վերաբերում է մարքսիզմին՝ լեզվագիտության մեջ, ինչպես և մյուս հասարակական գիտություններում, ապա այդ գործի նետ ես ուղղակի առընչություն ունեմ: Դրա համար էլ ես համաձայնվեցի պատասխան տալ ընկերների առաջադրած մի շարք հարցերին:

### ՀԱՐՑ. ՃԻՇՏ Է ԱՐԴՅՈՔ, ՈՐ ԼԵԶՈՒՆ ՎԵՐՆԱՇԵՆՔ Է ԲԱԶԻՍԻ ՎՐԱ

ՊԱՏԱՍԽԱՆ: Ո՛չ, ճիշտ չէ:

Բազիսը հասարակության տնտեսակարգն է նրա զարգացման տվյալ էտապում: Վերնաշենքը հասարակության բաղադրական, իրավական, կրոնական, գեղարվեստական, փիլիսոփայական հայացքներն են և դրանց համապատասխանող բաղադրական, իրավական և այլ հաստատությունները:

Ամեն մի բազիս ունի իրեն համապատասխանող վերնաշենքը: Ֆեոդալական հասարակարգի բազիսն ունի իր վերնաշենքը, իր բաղադրական, իրավական և այլ հայացքներն ու դրանց համապատասխանող հաստատությունները, կապիտալիստական բազիսն ունի իր վերնաշենքը, սոցիալիստականը՝ իրենը: Երե փոխվում ու լիկվիդացվում է բազիսը, ապա դրանից անմիջապես հետո փոխվում և լիկվիդացվում է նրա վերնաշենքը. երե նոր բազիս է ծնվում, ապա դրանից անմիջապես հետո ծնվում է նրան համապատասխանող վերնաշենքը:

Լեզուն այս տեսակետից արմատապես տարբերվում է վերնաշենքից: Վերնաշենք, օրինակ, ռուս հասարակությունը և ռուսաց լեզուն: Վերջին 30 տարիների ընթացքում Ռուսաստանում լիկվիդացվեց հին, կապիտալիստական բազիսը և կառուցվեց նոր, սոցիալիստական բազիս: Դրան համապատասխան լիկվիդացվեց կապիտալիստական բազիսի վերնաշենքը և ստեղծվեց սոցիալիստական բազիսին համապատասխանող նոր վերնաշենք: Հետևաբար, բաղադրական, իրավական և այլ հին հաստատությունները փոխարինվեցին նոր, սոցիալիստական հաստատություններով: Բայց, չնայած դրան, ռուսաց լեզուն հիմնականում մնաց նույնը, ինչպիսին էր մինչև Հոկտեմբերյան հեղաշրջումը:

Ի՞նչն այդ ժամանակաշրջանում փոխվեց ռուսաց լեզվի մեջ: Փոխվեց, որոշ չափով, ռուսաց լեզվի բառարանային կազմը, փոխվեց այն իմաստով,

որ համալրվեց զգալի ֆանակությամբ նոր բառերով ու արտահայտություններով, որոնք ստեղծվեցին սոցիալիստական նոր արտադրության ծագման, նոր պետության, սոցիալիստական նոր կուլտուրայի, նոր հասարակայնության, մորալի երեան զալու կապակցությամբ, վերջապես, տեխնիկայի ու գիտության անման կապակցությամբ. փոխվեց մի շարք բառերի ու արտահայտությունների իմաստը, որոնք ստացան իմաստային նոր նշանակություն. բառարանից դուրս ընկան որոշ ֆանակությամբ հնացած բառեր: Բսկ ինչ վերաբերում է ոուսաց լեզվի հիմնական բառարանային ֆոնդին և ֆերականական կառուցվածքին, որոնք կազմում են լեզվի հիմքը, ապա դրանք կապիտալիստական բազիսի լիկվիդացումից հետո ո՛չ միայն չլիկվիդացվեցին և չփոխարինվեցին լեզվի նոր հիմնական բառարանային ֆոնդով ու նոր ֆերականական կառուցվածքով, այլ, ընդհակառակը, պահպանվեցին ամբողջաբան և մնացին առանց որևէ լուրջ փոփոխության՝ պահպանվեցին հենց որպես ժամանակակից ոուսաց լեզվի հիմք:

Այնուհետև: Վերնաշենքը ծնունդ է առնում բազիսից, բայց այդ ամեննին չի նշանակում, թե այն միայն արտացոլում է բազիսը, թե այն պասիվ է, չեզոք, անտարբեր է վերաբերում իր բազիսի նակստագրին, դասակարգերի նակատագրին, հասարակակարգի բնույթին: Ընդհակառակը, լույս աշխարհ գալով, նա դառնում է մեծագույն ակտիվ ուժ, ակտիվորեն օժանդակում է իր բազիսին՝ ձևավորվելու և ամրապնդվելու, բոլոր միջոցները ձեռք է առնում, որպեսզի նոր կարգին օգնի՝ մինչև վերջը ջախջախելու և լիկվիդացնելու հին բազիսն ու հին դասակարգերը:

Այլ կերպ չի՝ էլ կարող լինել: Վերնաշենքը հենց նրա համար էլ ստեղծվում է բազիսի կողմից, որպեսզի այն ծառայի բազիսին, որպեսզի այն բազիսին ակտիվորեն օգնի ձևավորվելու և ամրապնդվելու. որպեսզի նա ակտիվորեն պայքարի լիկվիդացնելու հին, իր դարն ապրած բազիսը՝ նրա հին վերնաշենքի հետ միասին: Բավական է միայն, որ վերնաշենքը հրաժարվի իր այդ ծառայական դերից, բավական է միայն, որ վերնաշենքն իր բազիսի ակտիվ պաշտպանության դիրքից անցնի նրա նկատմամբ անտարբեր վերաբերմունքի դիրքին, դասակարգերի նկատմամբ միատեսակ վերաբերմունքի դիրքին, որպեսզի նա կորցնի իր որակը և դադարի վերնաշենք լինելուց:

Լեզուն այս տեսակետից արժատապես տարբերվում է վերնաշենքից: Լեզուն տվյալ հասարակության ներսում ծնված է ո՛չ թե այս կամ այն բազիսից, հին կամ նոր բազիսից, այլ դարերի ընթացքում հասարակության պատմության և բազիսների պատմության ամբողջ ընթացքի ծնունդ է: Այն ստեղծված է ո՛չ թե մեկ որևէ դասակարգի, այլ ամբողջ հասարակության, հասարակության բոլոր դասակարգերի կողմից, հարյուրավոր սերունդների ջանքերով: Այն ստեղծված է բավարարելու համար ո՛չ միայն մեկ որևէ դասակարգի, այլ ամբողջ հասարակության, հասարակության բոլոր դասակարգերի կարիքները: Հենց դրա համար էլ այն ստեղծված է որպես հասարակության համար միասնական և հասարակության բոլոր անդամների համար ընդհանուր համաժողովրդական լեզու: Այդ պատճառով էլ լեզվի, որպես մարդկանց հաղորդակցման միջոցի, ծառայական դերը ոչ թե այն է, որ սպասարկի մեկ դասակարգին՝ ի վնաս մյուս դասակարգերի, այլ այն, որ հավասարապես սպասարկի ամբողջ հասարակությանը, հասարակության բոլոր դասակարգերին: Դրանով էլ հենց բացատրվում է, որ լեզուն կարող է հավասար-

րապես սպասարկել ինչպես հին, մենոող հասարակարգին, այնպես էլ նոր, բարձրացող հասարակարգին, ինչպես հին, այնպես էլ նոր բազիսին, ինչպես շահագործողներին, այնպես էլ շահագործվողներին:

Ոչ ոքի համար զաղտնիք չէ այն փաստը, որ ռուսաց լեզուն նոյնպես լավ էր սպասարկում ռուսական կապիտալիզմին և ռուսական բուրժուական կուլտուրային՝ նախքան Հոկտեմբերյան հեղաշրջումը, ինչպես՝ այն այժմ սպասարկում է սոցիալիստական հասարակարգին և ռուս հասարակության սոցիալիստական կուլտուրային:

Նույնը պետք է ասել ուկրաինական, բելոռուսական, ուզբեկական, դաշախական, վրացական, հայկական, էստոնական, լատվիական, լիտվական, մոլդավական, քարաական, ադրբեջանական, բաշկիրական, բուրմենական և սովետական ազգերի մյուս լեզուների մասին, որոնք նոյնպես լավ էին սպասարկում այդ ազգերի հին, բուրժուական կարգերին, ինչպես՝ նրանք սպասարկում են նոր, սոցիալիստական հասարակարգին:

Այլ կերպ չի՝ էլ կարող լինել: Լեզուն հենց նրա համար էլ գոյություն ունի, այն հենց նրա համար էլ ստեղծված է, որպեսզի ծառայի հասարակությանը՝ իբրև ամբողջության, որպես մարդկանց հաղորդակցման գործիքի, որպեսզի այն ընդհանուր լինի ձևսարակության անդամների համար և միասնական՝ հասարակության համար, որպեսզի հավասարապես սպասարկի հասարակության անդամներին, անկախ նրանց դասակարգային դիրքից: Բավական է, որ լեզուն շեղվի այդ համաժողովրդական դիրքից, բավական է, որ լեզուն կանգնի որևէ սոցիալական խմբի գերադասման ու աջակցման դիրքի վրա՝ ի վնաս հասարակության մյուս սոցիալական խմբերի, և կկորցնի իր ուժակը, կդադարի հասարակության մեջ մարդկանց հաղորդակցման միջոց լինելուց, այն կվերածվի որևէ սոցիալական խմբի ժարգոնի, կնետադիմի և իրեն կդատապարտի անհետացման:

Այդ տեսակետից լեզուն սկզբունցորեն տարբերվելով վերնաշենքից, չի տարբերվում, սակայն, արտադրության գործիքներից, ասենք մեքենաներից, որոնք նույնպես կարող են հավասարապես ծառայել րեն՝ կապիտալիստական և րեն՝ սոցիալիստական կարգերին:

Այնուհետև: Վերնաշենքն արդյունք է մեկ դարաշրջանի, որի ընթացքում ապրում և զործում է տվյալ տնտեսական բազիսը: Այդ պատճառով էլ վերնաշենքը երկար չի ապրում, այն լիկվիդացվում և անհետանում է տվյալ բազիսի լիկվիդացման և անհետացման հետ միասին:

Իսկ լեզուն, ընդհակառակը, արդյունք է մի ամբողջ շարք դարաշրջանների, որոնց ընթացքում այն ձևավորվում, հարստանում, զարգանում, հղկվում է: Այդ պատճառով էլ լեզուն ապրում է անհամեմատ ավելի երկար, քան որևէ բազիս և որևէ վերնաշենք: Դրանով էլ հենց բացատրվում է, որ ո՛չ միայն մեկ բազիսի և նրա վերնաշենքի, այլև մի քանի բազիսների ու դրանց համապատասխանող վերնաշենքերի ծնունդը և լիկվիդացումը պատմության մեջ չի հանգեցնում տվյալ լեզվի լիկվիդացմանը, նրա կառուցվածքի լիկվիդացմանը և նոր լեզվի գոյացմանը՝ նոր բառարանային ֆոնդով ու նոր ֆեռականական կառուցվածքով:

Պուշկինի մահվան ժամանակվանից անցել է ավելի քան հարյուր տարի: Այդ ժամանակամիջոցում Ռուսաստանում լիկվիդացվեցին ֆեոդալական հասարակարգը, կապիտալիստական հասարակարգը և առաջացավ երրորդ,

սոցիալիստական հասարակարգը: Հետևաբար, լիկվիդացվել են երկու բազիս՝ իրենց վերնաշենքերով և առաջացել է նոր, սոցիալիստական բազիս՝ իր նոր վերնաշենքով: Սակայն, եթե վերցնենք, օրինակ, ոռոսաց լեզուն, ապա այն այդ մեծ ժամանակամիջոցում չի ենթարկվել որևէ հեղափոխման, և ժամանակակից ոռոսաց լեզուն իր կառուցվածքով փչ քանով է տարբերվում Պուշկինի լեզվից:

Ի՞նչն է փոխվել այդ ժամանակվա ընթացքում ոռոսաց լեզվի մեջ: Այդ ժամանակվա ընթացքում լրջորեն համալրվել է ոռոսաց լեզվի բառարանային կազմը, բառարանային կազմից դուրս են ընկել մեծ քանակությամբ հնացած բառեր, փոխվել է զգալի թվով բառերի իմաստային նշանակությունը, բարելավվել է լեզվի քերականական կառուցվածքը: Ինչ վերաբերում է պուշկինյան լեզվի կառուցվածքին՝ նրա քերականական կառուցվածքով և բառարանային հիմնական ֆոնդով, ապա այն պահպանվել է բոլոր էական կողմերով՝ որպես ժամանակակից ոռոսաց լեզվի հիմք:

Եվ դա միանգամայն հասկանալի է: Իրոք, ի՞նչ հարկ կա, որ յուրաքանչյուր հեղաշրջումից հետո լեզվի գոյություն ունեցող կառուցվածք՝ նրա քերականական կառուցվածքը և բառարանային հիմնական ֆոնդը ոչնչացվեն ու փոխարինվեն նորերով, ինչպես այդ սովորաբար լինում է վերնաշենքի հետ: Ո՞ւմ է հարկավոր, որ «ջուրը», «հողը», «լեռը», «անտառը», «ծուկը», «մարդը», «ֆայլերը», «գործերը», «արտադրելը», «առևտուր անելը» և այլն կոչվեն ո՛չ թե ջուր, հող, լեռ, և՛այլն, այլ ինչ որ ուրիշ կերպ: Ո՞ւմ է հարկավոր, որ բառերի փոփոխությունները լեզվի մեջ և բառերի գույակցումը նախադասության մեջ կատարվեն ո՛չ թե ըստ գոյություն ունեցող քերականության, այլ միանգամայն ուրիշ կերպ: Ռեոլուցիայի համար ի՞նչ օգուտ լեզվի այդպիսի հեղաշրջումից: Պատմությունն ընդհանրապես որևէ էական բան չի կատարում առանց դրա հատուկ անհրաժեշտության: Հարց է ծագում. ի՞նչ անհրաժեշտություն կա այդպիսի լեզվական հեղաշրջման, եթե ապացուցված է, որ գոյություն ունեցող լեզուն իր կառուցվածքով հիմնականում լիովին պիտանի է նոր հասարակարգի կարիքները բավարարելու համար: Հին վերնաշենքը ոչրնչացնել և այն նորով փոխարինել կարելի է և պետք է մի քանի տարվա ընթացքում, որպեսզի ասպարեզ բացվի հասարակության արտադրողական ուժերի զարգացման համար, բայց ինչպե՞ս ոչնչացնել գոյություն ունեցող լեզուն և նրա փոխարեն նոր լեզու կերտել մի քանի տարվա ընթացքում, անարխիա չմտցնելով հասարակական կյանքում, շտեղծելով հասարակության ֆայֆայման սպառնալիքներ: Ովքե՞ր կարող են, բացի դոն կիխոտներից, այդպիսի խնդիր դնել իրենց առջև:

Վերջապես, ևս մեկ արմատական տարբերություն վերնաշենքի և լեզվի միջև: Վերնաշենքն անմիջականորեն կապված չէ արտադրության հետ, մարդու արտադրական գործունեության հետ: Արտադրության հետ այն կապված է միայն անուղղակի կերպով, էկոնոմիկայի միջոցով, բազիսի միջոցով: Այդ պատճառով էլ վերնաշենքն արտադրողական ուժերի զարգացման մակարդակի փոփոխություններն արտացոլում է ո՛չ միանգամից և ո՛չ անմիջականորեն, այլ բազիսում տեղի ունեցած փոփոխություններից հետո, արտադրության մեջ տեղի ունեցած փոփոխությունների բեկման միջոցով, բազիսում կատարված փոփոխությունների մեջ: Այդ նշանակում է, որ վերնաշենքի գործողության սփերան նեղ է ու սահմանափակ:

Իսկ լեզուն, ընդհակառակը, մարդու արտադրական գործունեության հետ կապված է անմիջականորեն և մարդու ո՛չ միայն արտադրական գործունեության, այլև ամեն մի այլ գործունեության հետ, նրա աշխատանքի բոլոր սփերաներում, արտադրությունից մինչև բազիսը, բազիսից մինչև վերնաշենքը: Ուստի լեզուն արտադրության փոփոխություններն արտացոլում է միանգամից և անմիջականորեն, չսպասելով բազիսի փոփոխություններին: Այդ պատճառով էլ մարդու գործունեության բոլոր բնագավառներն ընդգրկող լեզվի գործողության սփերան շատ ավելի լայն ու բազմակողմանի է, քան վերնաշենքի գործողության սփերան: Ավելին, այն համարյա անսահման է:

Դրանով է հենց ամենից առաջ բացատրվում, որ լեզուն, իսկն ասած՝ նրա բառարանային կազմը, գտնվում է համարյա անընդհատ փոփոխման վիճակում: Արդյունաբերության և գյուղատնտեսության, առևտրի և տրանսպորտի, տեխնիկայի և գիտության անընդհատ աճը լեզվից պահանջում են նրա բառարանը համալրել իրենց աշխատանքի համար անհրաժեշտ նոր բառերով ու արտահայտություններով: Եվ լեզուն, անմիջականորեն արտացոլելով այդ կարիքները, իր բառարանը լրացնում է նոր բառերով, կատարելագործում է իր ֆերականական կառուցվածքը:

Այսպես ուրեմն.

ա) մարքսիստը չի կարող լեզուն համարել բազիսի վերնաշենք.

բ) լեզուն վերնաշենքի հետ շփոթել նշանակում է լուրջ սխալ բույլ տալ:

**ՀԱՐՑ. ՃԻՇՏ Է ԱՐԴՅՈՔ, ՈՐ ԼԵԶՈՒՆ ՄԻՇՏ ԷԼ ԵՂԵԼ Է ԵՎ ՄՆՈՒՄ Է ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ, ՈՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՈՉ-ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ, ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼԵԶՈՒ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ**

**ՊԱՏԱՍԽԱՆ:** Ո՛չ, ճիշտ չէ:

Դժվար չէ հասկանալ, որ այն հասարակության մեջ, որտեղ չկան դասակարգեր, չի կարող խոսք անգամ լինել դասակարգային լեզվի մասին: Նախնադարյան-համայնական տոհմային հասարակարգը չգիտեր դասակարգեր, հետևաբար այնտեղ չէր կարող լինել նաև դասակարգային լեզու: Լեզուն այնտեղ ընդհանուր, միասնական էր ամբողջ կոլեկտիվի համար: Այն առարկությունը, թե դասակարգ ասելով պետք է հասկանալ մարդկային ամեն մի կոլեկտիվ, այդ թվում նաև նախնադարյան-համայնական կոլեկտիվը ոչ թե առարկություն է, այլ բառախաղ, որն արժանի չէ հերքման:

Ինչ վերաբերում է հետագա զարգացմանը՝ տոհմային լեզուներից դեպի ցեղային լեզուները, ցեղային լեզուներից դեպի ժողովուրդների լեզուները և ժողովուրդների լեզուներից դեպի ազգային լեզուները,-- ապա ամենուրեք, զարգացման բոլոր էտապներում, լեզուն, որպես հասարակության մեջ մարդկանց հաղորդակցման միջոց, ընդհանուր ու միասնական է եղել հասարակության համար, որ հավասարապես ծառայել է հասարակության անդամներին, անկախ նրանց սոցիալական դրությունից:

Ես այստեղ նկատի ունեմ ո՛չ թե ստրկական և միջնադարյան ժամահակաշրջանների կայսրությունները, ասենք Կյուրոսի և Ալեքսանդր Մեծի կայսրությունը, կամ թե Կեսարի և Կարլոս Մեծի կայսրությունը, որոնք չունեին իրենց տնտեսական բազան և ներկայացնում էին ժամանակավոր ու անկա-

յուն ռազմա-վարչական միավորումներ: Այդ կայսրությունները ո՛չ միայն շունեին, այլև շէին կարող ունենալ կայսրության համար միասնական և կայսրության բոլոր անդամների համար հասկանալի լեզու: Դրանք ներկայացնում էին իրենց կյանքով ապրող և իրենց լեզուներս ունեցող ցեղերի ու ժողովուրդների կոնգլոմերատ: Հետևաբար, ես նկատի ունեմ ո՛չ այդ և դրանց նման կայսրությունները, այլ այն ցեղերն ու ժողովուրդները, որնք մտնում էին կայսրության կազմի մեջ, ունեին իրենց տնտեսական բազան և ունեին իրենց հնուց ի վեր գոյացած լեզուները: Պատմությունն ասում է, որ այդ ցեղերի և ժողովուրդների լեզուները եղել են ոչ դասակարգային, այլ համաժողովրդական, ցեղերի և ժողովուրդների համար ընդհանուր ու նրանց համար հասկանալի:

Իհարկե, դրա հետ միասին եղել են դիալեկտներ, տեղական բարբառներ, բայց դրանց վրա գերիշխել է և իրեն է ենթարկել ցեղի կամ ժողովրդի միասնական ու ընդհանուր լեզուն:

Հետագայում, կապիտալիզմի երևան գալուն, ֆեոդալական մասնատվածության լիկվիդացմանը և ազգային շուկայի գոյացմանը զուգընթաց, ժողովուրդները զարգացան ու դարձան ազգ, իսկ ժողովուրդների լեզուները՝ ազգային լեզուներ: Պատմությունն ասում է, որ ազգային լեզուները հանդիսանում են ո՛չ թե դասակարգային, այլ համաժողովրդական լեզուներ, ազգերի անդամների համար ընդհանուր և ազգի համար միասնական:

Վերևում ասվեց, որ լեզուն որպես հասարակչության մեջ մարդկանց հաղորդակցման միջոց, հավասարապես սպասարկում է հասարակության բոլոր դասակարգերին և այդ տեսակետից յուրատեսակ անտարբերություն է ցույց տալիս դեպի դասակարգերը: Բայց մարդիկ, սոցիալական առանձին խմբերը, դասակարգերն ամենևին էլ անտարբեր չեն լեզվի նկատմամբ: Նրանք աշխատում են լեզուն օգտագործել իրենց շահերի համար, նրան պարտադրել իրենց առանձնահատուկ լեկսիկոնը, իրենց առանձնահատուկ տերմինները, իրենց առանձնահատուկ արտահայտությունները: Այդ տեսակետից առանձնապես աչքի են ընկնում ժողովրդից անջատված և ժողովրդին ատող ունևոր դասակարգերի վերնախավերը՝ ազնվականական արիստոկրատիան, բուրժուազիայի վերնախավերը: Ստեղծվում են «դասակարգային» բարբառներ, ժարգոններ, սալոնային «լեզուներ»: Գրականության մեջ այդ բարբառները և ժարգոնները հանախ սխալ կերպով որակվում են որպես լեզուներ՝ «ազնվականական լեզու», «բուրժուական լեզու», ի հակադրություն «ապրիկտարական լեզվի», «գյուղացիական լեզվի»: Այդ հիման վրա, որքան էլ դա տարօրինակ է, մեր որոշ ընկերներ հանգեցին այն հետևության, որ ազգային լեզուն ֆիկցիա է, որ ռեալ կերպով գոյություն ունեն միմիայն դասակարգային լեզուներ:

Ես կարծում եմ, որ չկա ավելի սխալ բան, քան այդպիսի հետևությունը: Կարելի՞ է արդյոք այդ բարբառները և ժարգոնները համարել լեզուներ: Անկասկած չի կարելի: Չի՞ կարելի, նախ, այն պատճառով, որ այդ բարբառները և ժարգոնները չունեն իրենց ֆեռականական կառուցվածքն ու բառարանային հիմնական ֆոնդը, — նրանք այն փոխ են առնում ազգային լեզվից: Չի՞ կարելի, երկրորդ, այն պատճառով, որ բարբառները և ժարգոններն ունեն այս կամ այն դասակարգի վերնախավի անդամների մեջ գործածության նեղ սֆերա, և որպես մարդկանց հաղորդակցման միջոց, միանգամայն անպետք են հասարակության համար ամբողջությամբ վերցրած: Իսկ ի՞նչ ունեն

նրանք: Նրանք ունեն արխտոկրատիայի կամ քե բուրժուազիայի վերնախավերի սպեցիֆիկ հաշակներն արտացոլող որոշ սպեցիֆիկ բառերի կույտ. նրբանշակությամբ, նրբակրթությամբ աչքի ընկնող և ազգային լեզվի «կուպիտ» արտահայտություններից ու դարձվածքներից զերծ որոշ ֆանակությամբ արտահայտություններ ու խոսքի դարձվածքներ. վերջապես, որոշ ֆանակությամբ օտարերկրյա բառեր: Իսկ ամբողջ հիմնականը, այսինքն բառերի հընշող մեծամասնությունը և ֆեռականական կառուցվածքը, վերցված է համաժողովրդական, ազգային լեզվից: Հետևաբար, բարբառները և ժարգոնները համաժողովրդական ազգային լեզվի ճյուղավորումներ են. զուրկ լեզվական որևէ ինֆնուրույնությունից և դատապարտված մահացման: Կարծել, քե բարբառները և ժարգոնները կարող են զարգանալ ու դառնալ ազգային լեզուն արտամղելու և փոխարինելու ընդունակ ինֆնուրույն լեզուներ,— նշանակում է կորցնել պատմական հեռանկարը և շեղվել մարքսիզմի դիրքերից:

Վկայակոչում են Մարքսին, մի ֆաղվածք են բերում նրա «Սուրբ Մաֆս» հոդվածից, որտեղ ասված է, քե բուրժուաներն ունեն իրենց լեզուն», քե այդ լեզուն «արդյունք է բուրժուազիայի»: քե այն տողորված է մերկանտիլիզմի ու առ ու ծախսի ոգով: Այդ ֆաղվածքով որոշ ընկերներ ուզում են ապացուցել, քե Մարքսը իբր կողմնակից է եղել լեզվի «դասակարգայնության», քե նա ժխտում էր միասնական ազգային լեզվի գոյությունը: Եթե այդ ընկերները օրեկտիվորեն վերաբերվեին գործին, նրանք պետք է բերեին այդ նույն «Սուրբ Մաֆսը» հոդվածից նաև մյուս ֆաղվածքը, որտեղ Մարքսը, շոշափելով ազգային միասնական լեզվի գոյացման ուղիների հարցը, խոսում է «ազգային միասնական լեզվի մեջ բարբառների համակենտրոնացման մասին, որ պայմանավորված է տնտեսական ու ֆաղաֆական համակենտրոնացմամբ»:

Հետևաբար, Մարքսն ընդունում էր ազգային ՄԻԱՄՆԱԿԱՆ լեզվի անհրաժեշտությունը, որպես բարձրագույն ձևի, որին ենթարկված են բարբառները որպես ստորին ձևեր:

Այդ դեպքում ի՞նչ կարող է ներկայացնել բուրժուաների լեզուն, որը, Մարքսի ասելով, «արդյունք է բուրժուազիայի», Մարքսը համարո՞ւմ էր արդյոք այն հիշտ այնպիսի լեզու, ինչպես ազգային լեզուն իր առանձնահատուկ լեզվական կառուցվածքով: Կարո՞ղ էր արդյոք նա այն այդպիսի լեզու համարել: Իհարկե, ո՛չ: Մարքսը պարզապես ուզում էր ասել, որ բուրժուաներն իրենց շարժիական լեկսիկոնով ապականել են ազգային միասնական լեզուն, որ բուրժուաները, հետևաբար ունեն իրենց շարժիական ժարգոնը:

Դուրս է գալիս, որ այդ ընկերներն աղավաղել են Մարքսի դիրքը, իսկ աղավաղել են այն պատճառով, որ Մարքսից ֆաղվածքներ են բերել, ոչ որպես մարքսիստներ, այլ որպես տիրացուներ, չքափանցելով գործի էության մեջ:

Վկայակոչում են էնգելսին, «Բանվոր դասակարգի դրությունը Անգլիայում» բրոշյուրից մեջ են բերում էնգելսի այն խոսքերը, քե «... Անգլիական բանվոր դասակարգը ժամանակի ընթացքում դարձել է միանգամայն այլ ժողովուրդ, ֆան անգլիական բուրժուազիան», քե «բանվորները խոսում են ուրիշ բարբառով, ունեն այլ իդեաներ ու պատկերացումներ, ուրիշ բարբեր և բարոյական սկզբունքներ, ուրիշ կրոն և ֆաղաֆականություն, ֆան բուրժուազիան»: Այս ֆաղվածքի հիման վրա որոշ ընկերներ հետևություն են անում, քե էնգելսը ժխտում էր համաժողովրդական, ազգային լեզվի անհրաժեշտու-

թյունը, թե նա, հետևաբար, կողմնակից էր լեզվի «դասակարգայնությանը»: Ճիշտ է, էնգելսն այստեղ խոսում է ոչ թե լեզվի, այլ բարբառի մասին, որովհետև հասկանալով, որ բարբառը, որպես ազգային լեզվի նյութավորում, չի կարող փոխարինել ազգային լեզվին: Բայց այդ ընկերները, ըստ երևույթին, այնքան էլ չեն համակրում լեզվի և բարբառի տարբերության առկայությանը...

Ակներև է, որ հաղվածքը տեղին չի բերված, որովհետև էնգելսն այստեղ խոսում է ոչ թե «դասակարգային լեզուների» մասին, այլ գլխավորապես դասակարգային իդեանների, պատկերացումների, բարբերի, բարոյական սկզբունքների, կրոնի, հաղափականության մասին: Միանգամայն ճիշտ է, որ բուրժուաների ու պրոլետարների գաղափարները, պատկերացումները, բարբերը, բարոյական սկզբունքները, կրոնը, հաղափականությունն ուղղակի հակադիր են: Բայց ի՞նչ գործ ունի այստեղ ազգային լեզուն կամ թե լեզվի «դասակարգայնությունը»: Մի՞թե հասարակության մեջ դասակարգային հակասությունների առկայությունը կարող է փաստարկ ծառայել լեզվի «դասակարգայնության» օգտին կամ թե ազգային միասնական լեզվի անհրաժեշտության դեմ: Մարքսիզմն ասում է, որ լեզվի ընդհանրությունն ազգի կարևորագույն հատկանիշներից մեկն է: Ըստ որում շատ լավ իմանալով, որ ազգի ներսում կան դասակարգային հակասություններ: Ընդունում են արդյո՞ք հիշյալ ընկերները մարքսիստական այդ թեզը:

Վկայակոչում են Լաֆարգին, մատնացույց անելով, թե Լաֆարգը «Լեզուն և ունություն» իր բրոշյուրում ընդունում է լեզվի «դասակարգայնությունը», թե նա իբր ժխտում է համաժողովրդական, ազգային լեզվի անհրաժեշտությունը: Դա ճիշտ չէ: Լաֆարգն իրոք խոսում է «ազնվականական» կամ «արիստոկրատական լեզվի» մասին և հասարակության տարբեր խավերի «ժարգոնների» մասին: Բայց այդ ընկերները մոռանում են, որ Լաֆարգը, չհետաճիճի լեզվի ու ժարգոնի տարբերության հարցով, և բարբառներն անվանելով մերթ «արհեստական լեզու», մերթ «ժարգոն», իր բրոշյուրում որոշակի հայտարարում է, որ «արիստոկրատիային տարբերող արհեստական լեզուն... առանձնացել է համաժողովրդական լեզվից, որով խոսում էին և՛ բուրժուաները, և՛ արհեստավորները, հաղափր, և՛ գյուղը»:

Հետևաբար, Լաֆարգն ընդունում է համաժողովրդական լեզվի առկայությունը և անհրաժեշտությունը, լիովին հասկանալով «արիստոկրատական լեզվի» և մյուս բարբառների ու ժարգոնների ենթակա բնույթը և կախումը համաժողովրդական լեզվից:

Դուրս է գալիս, որ Լաֆարգին վկայակոչելը նպատակին չի խփում:

Վկայակոչում են այն, որ մի ժամանակ Անգլիայում անգլիական ֆեոդալները «հարյուրամյակների ընթացքում» խոսում էին ֆրանսերեն, այն ժամանակ, երբ անգլիական ժողովուրդը խոսում էր անգլերեն, որ այդ հանգամանքը, իբր թե, փաստարկ է հանդիսանում լեզվի «դասակարգայնության» օգտին և համաժողովրդական լեզվի անհրաժեշտության դեմ: Բայց դա փաստարկ չէ, այլ ինչ-որ անեկղոտ: Նախ, այն ժամանակ ֆրանսերեն խոսում էին ոչ բոլոր ֆեոդալները, այլ անգլիական ֆեոդալների աննշան վերնախավը թագավորական պալատում և կոմսություններում: Երկրորդ, նրանք խոսում էին ոչ թե ինչ-որ «դասակարգային լեզվով», այլ սովորական համաժողովրդական ֆրանսերեն լեզվով: Երրորդ, ինչպես հայտնի է, ֆրանսերեն լեզ-

վով այդ կոտրատվելը հետո անհետ վերացավ, իր տեղը զիջելով անգլիական համաժողովրդական լեզվին: Կարծո՞ւմ են արդյոք, այդ ընկերները, որ անգլիական ֆեոդալները և անգլիական ժողովուրդը «հարյուրամյակների ընթացքում» իրար հետ բացատրվում էին քաղաքացիների միջոցով, որ նրանք չէին օգտագործում անգլերեն լեզուն, որ անգլիական համաժողովրդական լեզու գոյություն չունեի այն ժամանակ, որ ֆրանսերեն լեզուն այն ժամանակ Անգլիայում ներկայացնում էր ինչ-որ ավելին, քան սալոնային լեզու, որը գործածվում էր միայն անգլիական արիստոկրատիայի վերնախավի նեղ շրջանում: Ինչպե՞ս կարելի է այսպիսի անեկդոտիկ «փաստարկների» հիման վրա ժխտել համաժողովրդական լեզվի առկայությունը և անհրաժեշտությունը:

Ռուս արիստոկրատները մի ժամանակ նույնպես ֆրանսերեն լեզվով էին կոտրատվում ցարական արևունիքում և սալոններում: Նրանք գոռոզանում էին, որ ռուսերեն խոսելով, կակազում են ֆրանսերեն, որ իրենք կարող են ռուսերեն խոսել միայն ֆրանսիական ակցենտով: Նշանակո՞ւմ է այդ, արդյոք, որ Ռուսաստանում այն ժամանակ չկար համաժողովրդական ռուսաց լեզու, որ համաժողովրդական լեզուն այն ժամանակ ֆիկցիա էր, իսկ «դասակարգային լեզուները»՝ ռեալ իրականություն:

Մեր ընկերները այստեղ բույլ են տալիս առնվազն երկու սխալ:

Առաջին սխալն այն է, որ նրանք լեզուն շփոթում են վերնաշենքի հետ: Նրանք կարծում են, որ եթե վերնաշենքը դասակարգային բնույթ ունի, ապա լեզուն էլ պետք է լինի ոչ թե համաժողովրդական, այլ դասակարգային: Բայց ես արդեն վերևում ասացի, որ լեզուն և վերնաշենքը երկու տարբեր հասկացողություններ են, որ մարքսիստը չի կարող բույլ տալ դրանց շփոթում:

Երկրորդ սխալն այն է, որ այդ ընկերները բուրժուազիայի ու պրոլետարիատի շահերի հակադրությունը, նրանց դասակարգային կատաղի պայքարն ըմբռնում են որպես հասարակության տրոհում, որպես ամեն տեսակ կապերի խզում քղնամական դասակարգերի միջև: Նրանք կարծում են, թե քանի որ հասարակությունը տրոհվել է և այլևս չկա միասնական հասարակություն, այլ կան միայն դասակարգեր, ապա հարկավոր չէ հասարակության համար նաև միասնական լեզու, հարկավոր չէ ազգային լեզու: Էլ ինչ է մնում, եթե հասարակությունը տրոհվել է և այլևս չկա համաժողովրդական, ազգային լեզու: Մնում են դասակարգերը և «դասակարգային լեզուները»: Հասկանալի է, որ յուրաքանչյուր «դասակարգային լեզու» կունենա իր «դասակարգային» բերականությունը՝ «պրոլետարական» բերականություն, «բուրժուական» բերականություն: Ճիշտ է, այդպիսի բերականություններ գոյություն չունեն բնության մեջ, բայց դա չի շփոթեցնում այդ ընկերներին. նրանք հավատում են, որ այդպիսի բերականություններ երևան կգան:

Մի ժամանակ մեզ մոտ կային «մարքսիստներ», որոնք պնդում էին, թե Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո մեր երկրում մնացած երկարուղիները բուրժուական են, թե մեզ, մարքսիստներիս, վայել չէ օգտվել դրանցից, թե պետք է դրանք քանդել ու կառուցել նոր, «պրոլետարական» երկարուղիներ: Նրանք դրա համար ստացան «ֆառանձավի մարդիկ» մականունը...

Հասկանալի է, որ հասարակության, դասակարգերի, լեզվի նկատմամբ այդպիսի պրիմիտիվ--անարխիստական հայացքն ընդհանուր ոչինչ չունի մարքսիզմի հետ: Բայց այն, անկասկած, գոյություն ունի և շարունակում է ապրել մեր որոշ մոլորված ընկերների գլուխներում:

Իհարկէ, հիշտ չէ, թե դասակարգային կատաղի պայքարի առկայության պատճառով հասարակությունն իբր տրոհվել է մեկ հասարակության մեջ իրար հետ այլևս տնտեսապես չկապված դասակարգերի: Ընդհակառակը: Քանի գոյություն ունի կապիտալիզմը, բուրժուաները և պրոլետարներն իրար հետ կապված կլինեն էկոնոմիկայի բոլոր բելերով, որպես կապիտալիստական միասնական հասարակության մասեր: Բուրժուաները չեն կարող ապրել ու հարստանալ իրենց տրամադրության տակ շունենալով վարձու բանվորներ, պրոլետարները չեն կարող շարունակել իրենց գոյությունը, չվարձվելով կապիտալիստների կողմից: Նրանց միջև տնտեսական ամեն տեսակ կապերի դադարումը նշանակում է ամեն մի արտադրության դադարում, իսկ արտադրության դադարումը հասցնում է հասարակության կործանմանը, հենց դասակարգերի կործանմանը: Հասկանալի է, որ ոչ մի դասակարգ չի՝ ցանկանա իրեն ենթարկել ոչնչացման: Դրա համար էլ դասակարգային պայքարը, որքան էլ այն սուր լինի, չի կարող հասցնել հասարակության փայայմանը: Միայն տգիտությունը մարհսիզմի հարցերում և լեզվի բնույթի լիակատար չըմբռնումը մեր որոշ ընկերներին կարող էին բելադրել հասարակության փայայման, «դասակարգային» լեզուների, «դասակարգային» բերականությունների հեփարը:

Վկայակոչում են, այնուհետև, Լենինին և հիշեցնում այն, որ Լենինն ընդունում էր երկու կուլտուրաների՝ բուրժուականի և պրոլետարականի առկայությունը կապիտալիզմի օրոք, որ կապիտալիզմի օրոք ազգային կուլտուրայի լոգունգը նացիոնալիստական լոգունգ է: Այս բոլորը հիշտ է և Լենինն այստեղ բացարձակապես իրավացի է: Բայց ինչ գործ ունի այստեղ լեզվի «դասակարգայնությունը»: Վկայակոչելով կապիտալիզմի օրոք երկու կուլտուրաների մասին Լենինի խոսքերը, այդ ընկերները, ինչպես երևում է, ուզում են ընթերցողին ներշնչել, թե հասարակության մեջ երկու կուլտուրաների՝ բուրժուականի և պրոլետարականի առկայությունը նշանակում է, որ լեզուներն էլ պետք է երկուսը լինեն, որովհետև լեզուն կապված է կուլտուրայի հետ,-- հետևաբար, Լենինը ժխտում է ազգային միասնական լեզվի անհրաժեշտությունը, հետևաբար, Լենինը կողմնակից է «դասակարգային» լեզուների: Այդ ընկերների սխալն այստեղ այն է, որ նրանք լեզուն նույնացնում և շփոթում են կուլտուրայի հետ: Մինչդեռ կուլտուրան և լեզուն երկու տարբեր բաներ են: Կուլտուրան կարող է լինել և՛ բուրժուական, և՛ սոցիալիստական, իսկ լեզուն, որպես հաղորդակցման միջոց, միշտ համաժողովրդական լեզու է և նա կարող է սպասարկել թե՛ բուրժուական և թե՛ սոցիալիստական կուլտուրային: Մի՞թե փաստ չէ, որ ռուսական, ուկրաինական, ուզբեկական լեզուներն այժմ այդ ազգերի սոցիալիստական կուլտուրային սպասարկում են նո՛ւյնպես ոչ-վատ, ինչպես Հոկտեմբերյան հեղաշրջումից առաջ դրանք սպասարկում էին իրենց բուրժուական կուլտուրաներին: Ուրեմն, խորապես սխալվում են այդ ընկերները, պնդելով, որ երկու տարբեր կուլտուրաների առկայությունը հանգեցնում է երկու տարբեր լեզուների գոյացմանը և միասնական լեզվի անհրաժեշտության ժխտմանը:

Խոսելով երկու կուլտուրաների մասին, Լենինը ելնում էր հենց այն դրույթից, որ երկու կուլտուրաների առկայությունը չի կարող հանգեցնել միասնական լեզվի ժխտմանը և երկու լեզուների գոյացմանը, որ լեզուն պետք է լինի միասնական: Երբ բունդականներն սկսեցին Լենինին մեղադրել այն բա-

նում, քե՛նա ժխտում է ազգային լեզվի՝ անհրաժեշտությունը և կոլտուրան մեկնաբանում է որպես «ոչ-ազգային», Լենինը, ինչպես հայտնի է, խիստ բողոքում էր դրա դեմ, հայտարարելով, որ ինքը պայմանում է բուրժուական կոլտուրայի դեմ, և ո՛չ քե՛նա ազգային լեզվի դեմ, որի անհրաժեշտությունը ինքը համարում է անվիճելի: Տարօրինակ է, որ մեր որոշ ընկերներ փառշեկան բունդականների հետևեցով:

Ինչ վերաբերում է միասնական լեզվին, որի անհրաժեշտությունը իբր քե՛նա ժխտում է Լենինը, ապա հարկ կլինե՛ր լսել Լենինի հետևյալ խոսքերը.

«Լեզուն մարդկային հաղորդակցման կարևորագույն միջոց է. լեզվի միասնությունը և նրա անաբգել զարգացումը հանդիսանում է ժամանակակից կապիտալիզմին համապատասխանող իրոք ազատ և լայն առևտրական շրջանառության, ըստ բոլոր առանձին դասակարգերի բնակչությանը ազատ լայն խմբավորման կարևորագույն պայմաններից մեկը»:

Դուրս է գալիս, որ հարգելի ընկերներն ազավաղել են Լենինի հայացքները:

Վկայակոչում են, վերջապես, Ստալինին: Ստալինից բաղված է՛ն քե՛նում այն մասին, որ «Բուրժուազիան և նրա նացիոնալիստական պարտիաները եղել են ու մնում են այդ ժամանակաշրջանում այդպիսի ազգերի զլխավոր դեկավար ուժը»: Այս բոլորը ճիշտ է: Բուրժուազիան և նրա նացիոնալիստական պարտիաները իրոք դեկավարում են բուրժուական կոլտուրան, հիշտ այնպես, ինչպես պրոլետարիատն ու նրա ինտերնացիոնալիստական պարտիան դեկավարում են պրոլետարական կոլտուրան: Բայց ինչ գործ ունի այստեղ լեզվի «դասակարգայնությունը»: Մի՞թե այդ ընկերներին հայտնի չէ, որ ազգային լեզուն ազգային կոլտուրայի ձևն է, որ ազգային լեզուն կարող է սպասարկել քե՛նա բուրժուական և քե՛նա սոցիալիստական կոլտուրային: Մի՞թե մեր ընկերները ծանոթ չեն մարքսիստների այն հայտնի ֆորմուլային, որ ներկայիս ռուսական, ուկրաինական, բելոռուսական և մյուս կոլտուրաները հանդիսանում են բովանդակությամբ սոցիալիստական և ձևով, այսինքն՝ ըստ լեզվի, ազգային: Համաձայն են նրանք արդյոք այդ մարքսիստական ֆորմուլային:

Մեր ընկերների սխալն այստեղ այն է, որ նրանք չեն տեսնում տարբերությունը կոլտուրայի ու լեզվի միջև և չեն հասկանում, որ կոլտուրան իր բովանդակությամբ փոխվում է հասարակության զարգացման յուրաքանչյուր նոր ժամանակաշրջանի հետ, այն ժամանակ, երբ լեզուն հիմնականում նույն լեզուն է մնում մի քանի ժամանակաշրջանների ընթացքում, հավասարապես սպասարկելով ինչպես նոր, այնպես էլ հին կոլտուրային:

Այսպես, ուրեմն.

ա) լեզուն որպես հաղորդակցման միջոց միշտ և՛ղև է և մնում է հասարակության համար միասնական և նրա անդամների համար ընդհանուր լեզու. բ) բարբառների և ժարգոնների անկայությունը չի ժխտում, այլ հաստատում է համաժողովրդական լեզվի անկայությունը, որի հյուղավորումներն են հանդիսանում դրանք և որին ենթակա են դրանք.

գ) լեզվի «դասակարգայնության» ֆորմուլան սխալ, ոչ մարքսիստական ֆորմուլա է:

## ՀԱՐՑ. ՈՐՈ՞ՇԻ ԵՆ ԼԵԶՎԻ ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

**ՊԱՏԱՍԽԱՆ:** Լեզուն պատկանում է հասարակության գոյության ամբողջ ժամանակամիջոցում գործող հասարակական երևույթների թվին: Այն ծնվում և զարգանում է հասարակության ծննդի և զարգացման հետ միասին: Այն մեռնում է հասարակության մահվան հետ միասին: Հասարակությունից դուրս լեզու չկա: Դրա համար էլ լեզուն և նրա զարգացման օրենքները կարելի է հասկանալ միայն այն դեպքում, երբ այն ուսումնասիրվում է անխզելի կապի մեջ հասարակության պատմության հետ, ժողովրդի պատմության հետ, որին պատկանում է ուսումնասիրվող լեզուն և որը հանդիսանում է այդ լեզվի ստեղծողն ու կրողը:

Լեզուն միջոց, գործիք է, որի օգնությամբ մարդիկ հաղորդակցվում են իրար հետ, փոխանակում մտքերը և հասնում փոխադարձ ըմբռնման: Անմիջականորեն կապված լինելով մտածողության հետ, լեզուն բառերի մեջ և բառերի միակցությամբ նախադասությունների մեջ գրանցում ու ամրապնդում է մտածողության աշխատանքի արդյունքները, մարդու իմացական աշխատանքի հաջողությունները և, այդպիսով, հնարավոր է դարձնում մտքերի փոխանակությունը մարդկային հասարակության մեջ:

Մտքերի փոխանակությունը մշտական և կենսական անհրաժեշտություն է, որովհետև առանց դրան հնարավոր չէ կարգավորել մարդկանց համատեղ գործողությունները բնության ուժերի դեմ մղվող պայքարում, նյութական անհրաժեշտ բարիքների արտադրության համար մղվող պայքարում, հնարավոր չէ հաջողությունների հասնել հասարակության արտադրական գործունեության մեջ,— հետևաբար, հնարավոր չէ հասարակական արտադրության բուն գոյությունը: Հետևաբար, առանց հասարակության համար հասկանալի և նրա անդամների համար ընդհանուր լեզվի, հասարակությունը դադարեցնում է արտադրությունը, փայփայվում է և դադարում է որպես հասարակություն գոյություն ունենալուց: Այդ իմաստով լեզուն հաղորդակցման գործիք լինելով, դրա հետ միասին հանդիսանում է հասարակության պայքարի և զարգացման գործիք:

Ինչպես հայտնի է, լեզվի մեջ գոյություն ունեցող բոլոր բառերը միասին կազմում են լեզվի, այսպես կոչված, բառարանային կազմը: Լեզվի բառարանային կազմի մեջ գլխավորը բառարանային հիմնական ֆոնդն է, որի մեջ մտնում են նաև բոլոր արմատական բառերը, որպես նրա միջուկը: Դրա շատ ավելի պակաս ծավալ ունի, քան լեզվի բառարանային կազմը, բայց այն ապրում է շատ երկար, դարերի ընթացքում և լեզվին հիմք է տալիս նոր բառերի կազմության համար: Բառարանային կազմն արտացոլում է լեզվի վիճակի պատկերը, որքան ավելի հարուստ և ավելի բազմակողմանի է բառարանային կազմը, այնքան ավելի հարուստ ու ավելի զարգացած է լեզուն:

Սակայն բառարանային կազմն ինքնին վերցրած դեռևս լեզու չի կազմում: Այն ավելի շուտ շինանյութ է հանդիսանում լեզվի համար: Ճիշտ այնպես, ինչպես շինարարական գործում շինանյութերը չեն կազմում շենքեր, թեև առանց դրանց անհնարին է շենք կառուցել, այնպես էլ լեզվի բառարանային կազմը չի կազմում բուն լեզուն, թեև առանց դրան աներևակայելի է որևէ լեզու: Սակայն, լեզվի բառարանային կազմը մեծադույն նշանակություն է ստանում, երբ այն դրվում է լեզվի բերականության տրամադրության տակ,

որը որոշում է բառերի փոփոխման կանոնները, բառերի նախադասության մեջ միացման կանոնները և այդպիսով լեզվին տալիս է կոտ, իմաստավորված բնույթ: Քերականությունը (ձևաբանությունը, շարահյուսությունը) բառերի փոփոխման և նախադասության մեջ բառերի զուգորդման կանոնների ժողովածուն է: Հետևաբար, հենց քերականության շնորհիվ լեզուն հնարավորություն է ստանում մարդկային մտերն օժտել լեզվական նյութական քաղանքով:

Քերականության տարբերիչ գիծն այն է, որ նա տալիս է բառերի փոփոխման կանոնները, նկատի ունենալով ո՛չ թե կոնկրետ բառերը, այլ ընդհանրապես բառերը, առանց որևէ կոնկրետության. նա կանոններ է տալիս նախադասություններ կազմելու համար, նկատի ունենալով ո՛չ թե ինչ-որ կոնկրետ նախադասություններ, ասենք, կոնկրետ ենթակա, կոնկրետ ստորոգյալ և այլն, այլ ընդհանրապես ամեն տեսակ նախադասություններ, անկախ այս կամ այն նախադասության կոնկրետ ձևից: Հետևաբար, մասնավորից և կոնկրետից աբստրահվելով, ինչպես բառերի, այնպես էլ նախադասությունների մեջ, քերականությունը վերցնում է այն ընդհանուրը, որը կազմում է բառերի փոփոխությունների և նախադասությունների մեջ՝ բառերի զուգակցման հիմքը և դրանից կառուցում է քերականական կանոններ, քերականական օրենքներ: Քերականությունը մարդկային մտածողության երկարատև աբստրահվող աշխատանքի արդյունքն է, մտածողության վիթխարի հաջողությունների ցուցանիշը:

Այդ տեսակետից քերականությունը նման է երկրաչափությանը, որը տալիս է իր օրենքները, աբստրահվելով կոնկրետ առարկաներից, առարկաները դիտելով որպես կոնկրետությունից զուրկ մարմիններ և նրանց հարաբերությունները որոշելով ո՛չ թե որպես ինչ-որ կոնկրետ առարկաների կոնկրետ հարաբերություններ, այլ որպես ամեն մի կոնկրետությունից զուրկ մարմինների հարաբերություններ ընդհանրապես: \

Ի տարբերություն վերնաշենքի, որն արտադրության հետ կապված է ո՛չ թե ուղղակի կերպով, այլ էկոնոմիկայի միջոցով, լեզուն անմիջականորեն կապված է մարդու արտադրական գործունեության հետ այնպես, ինչպես և ամեն մի այլ գործունեության հետ, նրա աշխատանքի, առանց բացառության, բոլոր սփերաներում: Դրա համար էլ լեզվի բառարանային կազմը, որպես առավել զգայունը փոփոխությունների վերաբերմամբ, գտնվում է համարյա անընդհատ փոփոխության վիճակում, ըստ որում լեզուն, ի տարբերություն վերնաշենքի, հարկ չի գտնում սպասելու բազիսի լիկվիդացմանը, նա իր բառարանային կազմի մեջ փոփոխություններ է մտցնում նախաձեռն բազիսի լիկվիդացումը և անկախ բազիսի վիճակից:

Սակայն, լեզվի բառարանային կազմը փոխվում է ո՛չ որպես վերնաշենք, ո՛չ թե հնի վերացման և նորի կերտման միջոցով, այլ գոյություն ունեցող բառարանը սոցիալական կարգի փոփոխությունների, արտադրության զարգացման, կուլտուրայի, գիտության և այլն զարգացման կապակցությամբ առաջացած նոր բառերով լրացնելու միջոցով: Ըստ որում, չնայած այն բանին, որ լեզվի բառարանային կազմից սովորաբար դուրս են ընկնում որոշ ֆանալոյությամբ հնացած բառեր, նրան ավելանում են ավելի շատ նոր բառեր: Իսկ ինչ վերաբերում է բառարանային հիմնական ֆոնդին, ապա այն հիմնակա-

նում պահպանվում է ամբողջապես և օգտագործվում է որպես լեզվի բառարանային կազմի հիմք:

Եվ դա հասկանալի է: Ո՛չ մի անհրաժեշտություն չկա ոչնչացնելու բառարանային հիմնական ֆոնդը, եթե այն կարող է հաջողությամբ օգտագործվել մի շարք պատմական ժամանակաշրջանների ընթացքում, չխոսելով արդեն այն մասին, որ դարերի ընթացքում կուտակված բառարանային հիմնական ֆոնդի ոչնչացումը, կարճ ժամանակամիջոցի ընթացքում բառարանային նոր հիմնական ֆոնդ ստեղծելու անկարելիության պայմաններում, կնանգեցնել լեզվի կարվածահարության, մարդկանց միջև հաղորդակցման գործի լիակատար փայլամանը:

Լեզվի բերականական կառուցվածքը փոփոխվում է է՛լ ավելի դանդաղ, քան նրա հիմնական բառարանային ֆոնդը: Դարաշրջանների ընթացքում մշակված և լեզվի մեջ միս ու արյուն դարձած բերականական կառուցվածքը փոփոխվում է է՛լ ավելի դանդաղ, քան բառարանային հիմնական ֆոնդը: Այն, իհարկե, փոփոխության է ենթարկվում ժամանակի ընթացքում, այն կատարելագործվում է, բարելավվում և հզորանում իր կանոնները, հարստանում է նոր կանոններով, սակայն բերականական կառուցվածքի հիմքերը պահպանվում են շատ երկար ժամանակի ընթացքում, որովհետև դրանք, ինչպես ցույց է տալիս պատմությունը, կարող են հասարակությանը հաջողությամբ սպասարկել մի շարք դարաշրջանների ընթացքում:

Այսպիսով, լեզվի բերականական կառուցվածքը և նրա բառարանային հիմնական ֆոնդը կազմում են լեզվի ճիմքը, նրա սպեցիֆիկայի էությունը:

Պատմությունը նշում է լեզվի մեծ դիմացկունությունը և վիրխարի դիմադրողականությունը բռնի ասիմիլյացիային: Որոշ պատմաբաններ այդ երեվույրը բացատրելու փոխարեն, սահմանափակվում են զարմանք հայտնելով: Բայց զարմանքի համար այստեղ որևէ հիմք չկա: Լեզվի դիմացկունությունը բացատրվում է նրա բերականական կառուցվածքի և բառարանային հիմնական ֆոնդի դիմացկունությամբ: Հարյուրավոր տարիներ քյուրֆական ասիմիլյատորները ջանք էին քափում աղճատելու, խորտակելու և ոչնչացնելու բալկանյան ժողովուրդների լեզուները: Այդ ժամանակամիջոցի ընթացքում բալկանյան լեզուների բառարանային կազմը ենթարկվեց լուրջ փոփոխությունների, յուրացվեցին ոչ-ֆիչ քյուրֆական բոլոր ու արտահայտություններ, եղան նաև «մերձեցումներ» և «հեռացումներ», սակայն բալկանյան լեզուները դիմացան և ապրեցին: Ինչո՞ւ: Որովհետև այդ լեզուների բերականական կառուցվածքը և բառարանային հիմնական ֆոնդը հիմնականում պահպանվեցին:

Այս բոլորից հետևում է, որ լեզուն, նրա կառուցվածքը չի կարելի դիտել որպես մեկ որևէ դարաշրջանի արդյունք: Լեզվի ստրուկտուրան, նրա բերականական կառուցվածքը և բառարանային հիմնական ֆոնդը մի շարք դարաշրջանների արդյունք է:

Պետք է ենթադրել, որ ժամանակակից լեզվի տարրերը սաղմնավորվել են դեռևս խոր հնության մեջ, նախքան ստրկության դարաշրջանը: Դա ոչ-բարդ լեզու էր, բառարանային շատ աղֆատիկ ֆոնդով, բայց իր բերականական կառուցվածքով, ճիշտ է, պրիմիտիվ, բայց, այնուամենայնիվ, բերականական կառուցվածքով:

Արտադրության հետագա զարգացումը, դասակարգերի երևան գալը,

գրության երևան գալը, պետության ծագումը, որը կառավարման համար կարիք ուներ ինչ քե շատ կանոնավորված գրագրության, առևտրի զարգացումը, որն է՛լ ավելի կարիք ուներ կանոնավորված գրագրության, տպագրական դազգահի երևան գալը, գրականության զարգացումը,— այս բոլորը մեծ փոփոխություններ մտցրեց լեզվի զարգացման մեջ: Այդ ժամանակամիջոցում ցեղերը և ժողովուրդները կոտորակվում էին ու բաժանվում, խառնվում էին և խաչաձևվում, իսկ հետագայում երևան եկան ազգային լեզուներ և պետություններ, տեղի ունեցան ռևոլյուցիոն հեղաշրջումներ, հին հասարակական կարգերը փոխարինվեցին նորերով: Այս բոլորն է՛լ ավելի մեծ փոփոխություններ մտցրեց լեզվի և նրա զարգացման մեջ:

Սակայն, խորապես սխալ կլինե՞ր կարծել, քե լեզվի զարգացումը տեղի է ունեցել ճիշտ այնպես, ինչպես վերնաշենքի զարգացումը՝ գոյություն ունեցողի ոչնչացման և նորի կառուցման միջոցով: Իրականում լեզվի զարգացումը տեղի է ունեցել ո՛չ քե գոյություն ունեցող լեզվի ոչնչացման և նորի կերտման միջոցով, այլ գոյություն ունեցող լեզվի հիմնական տարրերի ծավալման ու կատարելագործման միջոցով: Ըստ որում լեզվի մեկ որակից անցումը մյուս որակին տեղի էր ունենում ո՛չ քե պայքարունի միջոցով, ո՛չ քե հնի միանգամյա ոչնչացման և նորի կերտման միջոցով, այլ լեզվի նոր որակի, նոր կառուցվածքի տարրերի աստիճանական ու տևական կուտակման միջոցով, հին որակի տարրերի աստիճանական մահացման միջոցով:

Ասում են, որ լեզվի ստադիալ զարգացման քեորիան մարքսիստական քեորիա է, որովհետև այն ընդունում է հանկարծակի պայքարունների անհրաժեշտությունը, որպես լեզուն հին որակից նոր որակի անցնելու պայման: Դա, իհարկե, հի՛շտ չէ, որովհետև դժվար է որևէ մարքսիստական բան գտնել այդ քեորիայի մեջ: Եվ երե ստադիալականության քեորիան իրոք հանկարծակի պայքարուններ է ընդունում լեզվի զարգացման պատմության մեջ, ապա, ավելի վատ նրա համար: Մարքսիզմը չի ընդունում հանկարծակի պայքարուններ լեզվի զարգացման մեջ, գոյություն ունեցող լեզվի հանկարծակի մահացում և նոր լեզվի հանկարծակի կառուցում: Լաֆարգն իրավացի չէր, երբ նա խոսում էր «1789—1794 թվականների միջև տեղի ունեցած լեզվական հանկարծակի ռևոլյուցիայի» մասին Ֆրանսիայում (տես Լաֆարգի «Լեզուն և ռևոլյուցիան» բրոշյուրը): Լեզվական ո՛չ մի ռևոլյուցիա, այն էլ հանկարծակի, այն ժամանակ չի եղել Ֆրանսիայում: Իհարկե, այդ ժամանակամիջոցում ֆրանսերենի բառարանային կազմը համալրվեց նոր բառերով և արտահայտություններով, դուրս ընկան որոշ հնացած բառեր, փոխվեց որոշ բառերի իմաստային նշանակությունը— և այդհանր միայն:

Բայց այդպիսի փոփոխությունները ո՛չ մի կերպ չեն որոշում լեզվի բախտը: Լեզվի մեջ գլխավորը նրա բերականական կառուցվածքն է և բառարանային հիմնական ֆոնդը: Սակայն, ֆրանսերենի բերականական կառուցվածքը և բառարանային հիմնական ֆոնդը ո՛չ միայն չանհետացան ֆրանսիական բուրժուական ռևոլյուցիայի ժամանակաշրջանում, այլ պահպանվեցին առանց էական փոփոխությունների, և ոչ միայն պահպանվեցին, այլ շարունակում են ապրել այժմ էլ ժամանակակից ֆրանսերենում: Ես արդեն չեմ խոսում այն մասին, որ գոյություն ունեցող լեզվի լիկվիդացման և ազգային նոր լեզվի կերտման համար («լեզվական հանկարծակի ռևոլյուցիա») ծիծա-

ղելիորեն ֆիշ է հինգ-վեց տարվա ժամկետը,— դրա համար հարկավոր են հարյուրամյակներ:

Մարֆսիզմը գտնում է, որ լեզվի անցումը հին որակից նոր որակին տեղի է ունենում ո՛չ թե պայքարունի միջոցով, ո՛չ թե գոյություն ունեցող լեզուն ոչնչացնելու և նորն ստեղծելու միջոցով, այլ նոր որակի տարրերի աստիճանական կուտակման միջոցով, հետևաբար, հին որակի տարրերի աստիճանական մահացման միջոցով:

Ընդհանրապես, ի գիտություն պայքարուններով տարվող ընկերների, պետք է ասել, որ պայքարունի միջոցով հին որակից նորին անցնելու օրենքն անկիրառելի է ոչ միայն լեզվի զարգացման պատմության վերաբերմամբ: Դա ոչ միշտ գործադրելի է նաև բազիսային կամ վերնաշենքային կարգի այլ հասարակական երևույթների վերաբերմամբ: Դա պարտադիր է բշտական դասակարգերի բաժանված հասարակության նամար: Բայց դա բնավ պարտադիր չէ բշտական դասակարգեր չունեցող հասարակության համար: Մենք 8—10 տարվա ընթացքում մեր երկրի գյուղատնտեսության մեջ իրականացրինք անցումը բուրժուական անհատական-գյուղացիական կարգից դեպի սոցիալիստական կոլխոզային կարգը: Դա մի ռևոլյուցիա էր, որը վերացրեց հին, բուրժուական տնտեսակարգը գյուղում և ստեղծեց նոր, սոցիալիստական կարգ: Սակայն այդ հեղաշրջումը կատարվեց ոչ թե պայքարունի միջոցով. այսինքն ոչ թե գոյություն ունեցող իշխանությունը տապալելու և նոր իշխանություն ստեղծելու միջոցով, այլ գյուղում հին, բուրժուական կարգից աստիճանաբար դեպի նորը անցնելու միջոցով: Իսկ այդ հաջողվեց կատարել այն պատճառով, որ դա ռևոլյուցիա էր վերևից, որ հեղաշրջումը կատարվեց գոյություն ունեցող իշխանության նախաձեռնությամբ, գյուղացիության հիմնական մասսաների աջակցությամբ:

Ասում են, թե պատմության մեջ տեղի ունեցած լեզուների խաչաձևման բազմաթիվ փաստերը ճի՞մք են տալիս ենթադրելու, որ խաչաձևման ժամանակ նոր լեզու է գոյանում պայքարունի միջոցով, հին որակից հանկարծակի նոր որակի անցնելու միջոցով: Դա բնավ ճիշտ չէ: Լեզուների խաչաձևումը չի կարելի դիտել որպես վեոական հարվածի եզակի ակտ, որ իր արդյունքներն է տալիս մի ֆանի տարվա ընթացքում: Լեզուների խաչաձևումը տևական պրոցես է, որը շարունակվում է հարյուրավոր տարիներ: Ուստի այստեղ ոչ մի պայքարունի մասին խոսք լինել չի կարող:

Այնուհետև: Միանգամայն սխալ կլինեք կարծել, որ ասենք, երկու լեզուների խաչաձևման հետևանքով ստացվում է մի նոր՝ երրորդ լեզու, որը նման չէ խաչաձևող լեզուներից և ոչ մեկին և որակապես տարբերվում է նրանցից յուրաքանչյուրից: Իրոք, խաչաձևման դեպքում լեզուներից մեկը սովորաբար հաղթող է դուրս գալիս, պահպանում է իր ֆերականական կառուցվածքը, պահպանում է բառարանային իր հիմնական ֆոնդը և շարունակում է զարգանալ իր զարգացման ներքին օրենքներով, իսկ մյուս լեզուն աստիճանաբար կորցնում է իր որակը և աստիճանաբար մահանում:

Հետևաբար, խաչաձևումը ոչ թե տալիս է ինչ-որ նոր, երրորդ լեզու, այլ պահպանում է լեզուներից մեկը, պահպանում է նրա ֆերականական կառուցվածքն ու բառարանային հիմնական ֆոնդը և նրան հնարավորություն է տալիս զարգանալու իր զարգացման ներքին օրենքներով:

Ճիշտ է, ընդամին տեղի է ունենում հաղթանակած լեզվի բառարանային

կազմի որոշ հարստացում ի հաշիվ պարտված լեզվի, բայց դա ոչ թե թուլացում, այլ, ընդհակառակը, ուժեղացում է այն:

Այդպես է եղել, օրինակ, ռուսաց լեզվի հետ, որի հետ, պատմական զարգացման ընթացքում, խաչաձևվել են մի շարք այլ ժողովուրդների լեզուներ և որը միշտ հաղթող է դուրս եկել:

Իհարկե, ռուսաց լեզվի բառարանային կազմը ընդամին լրանում էր ի հաշիվ այլ լեզուների բառարանային կազմի, բայց դա ոչ միայն չթուլացրեց, այլ, ընդհակառակը, հարստացրեց և ուժեղացրեց ռուսաց լեզուն:

Ինչ վերաբերում է ռուսաց լեզվի ազգային ինֆնատիպությանը, ապա այն անգամ նվազագույն վնաս չկրեց, որովհետև, պահպանելով իր փերականական կառուցվածքը և հիմնական բառարանային ֆոնդը, ռուսաց լեզուն շարունակում էր առաջ ընթանալ ու կատարելագործվել իր զարգացման ներքին օրենքներով:

Տարակույս չի կարող լինել, որ խաչաձևման քեռիան որևէ լուրջ բան չի կարող տալ սովետական լեզվագիտությանը: Եթե հիշտ է, որ լեզվագիտության գլխավոր խնդիրն է ուսումնասիրել լեզվի զարգացման ներքին օրենքները, ապա պետք է ընդունել, որ խաչաձևման քեռիան ոչ միայն չի լուծում այդ խնդիրը, այլ նույնիսկ չի առաջադրում այն,-- նա պարզապես չի նկատում կամ չի հասկանում այն:

### ՀԱՐՑ. ԱՐԴՅՈՒՔ ԼԻՇՏ ՎԱՐՎԵՅ «ՊՐԱՎԴԱ»-Ն, ԱԶԱՏ ԴԻՍԿՈՒՍԻԱ ԲԱՆԱԼՈՎ ԼԵԶՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁԸ

ՊԱՏԱՍԽԱՆ: Ճիշտ վարվեց:

Թե ինչ ուղղությամբ կլուծվեն լեզվագիտության հարցերը, պարզ կդառնա դիսկուսիայի վերջում: Բայց արդեն այժմ կարելի է ասել, որ դիսկուսիան մեծ օգուտ բերեց:

Դիսկուսիան նախ և առաջ պարզեց, որ լեզվագիտության օրգաններում, թե կենտրոնում և թե ռեսպուբլիկաներում տիրում էր գիտությանը և գիտության մարդկանց ոչ հատուկ ռեժիմ: Սովետական լեզվագիտության մեջ իրերի դրության անգամ նվազագույն ֆենադատությունը, լեզվագիտության մեջ այսպես կոչված «նոր ուսմունքը» ֆենադատելու նույնիսկ ամենաանհամարձակ փորձերը հետապնդվում և խափանվում էին լեզվագիտության ղեկավար շրջանների կողմից: Ն. Յա. Մառի ժառանգությանը ֆենադատաբար վերաբերվելու համար, Ն. Յա. Մառի ուսմունքին անգամ նվազագույն անհավանություն ցույց տալու համար, լեզվագիտության ասպարեզում արժեքավոր աշխատողներ ու հետազոտողներ հանվում էին պաշտոններից կամ իջեցվում էր նրանց պաշտոնը: Լեզվագիտության գործիչները պատասխանատու պաշտոնների առաջ էին փաշվում ոչ թե ըստ գործարար հատկանիշի, այլ Ն. Յա. Մառի ուսմունքը անվերապահորեն ընդունելու հատկանիշի համաձայն:

Հանրահայտ է, որ ոչ մի գիտություն չի կարող զարգանալ և առաջադիմել առանց կարծիքների պայքարի, առանց ֆենադատության ազատության: Սակայն այդ հանրահանաչ կանոնը անտեսվում ու ոտնահարվում էր առանց մի այլևայլության: Ստեղծվել էր անսխալական ղեկավարների ներփակ մի խումբ, որը իրեն անպահովելով ամեն մի հնարավոր ֆենադատությունից, սկսել էր ֆմահանություն և կամայականություն անել:

Ահա օրինակներից մեկը. այսպես կոչված «Բաժվի կուրսը» (Բաժվում Ն. Յա. Մադի կարգացած դասսխոսությունները). որը հեղինակը ինքը խոտանել և արգելել էր վերահրատարակել, — սակայն, — ղեկավարների մի կաստայի կարգադրությամբ (ընկ. Մեշչանինովը նրանց անվանում է Ն. Յա. Մադի «աշակերտներ») վերահրատարակվել և առանց որևէ վերապահության մտցվել է ուսանողներին հանձնարարվող ձեռնարկների ցանկի մեջ: Այդ նշանակում է, որ ուսանողներին խաբել են, տալով նրանց խոտանված «կուրսը», որպես լիարժեք ձեռնարկ: Երևես հոսմոգած շլիենի ընկ. Մեշչանինովի և լեզվագիտության մյուս գործիչների ազնվության մեջ, ես կասեի, որ նման վարմունքը հավասարազուր է վնասարարության:

Ինչպե՞ս կարող էր պատահել այդ: Իսկ դա պատահեց այն պատճառով, որ լեզվագիտության մեջ ստեղծված արակշեկյան ուժիմը պատվաստում է անպատասխանատվություն և խախուսում է այդպիսի կամայականությունները:

Դիսկուսիան շափագանց օգտակար հանդիսացավ նախ և առաջ այն պատճառով, որ նա լույս աշխարհ հանեց արակշեկյան այդ ուժիմը և ջարդ ու փշուր արեց այն:

Սակայն դիսկուսիայի օգուտը դրանով չի սպառվում: Դիսկուսիան ոչ միայն ջախջախեց լեզվագիտության մեջ եղած հին ուժիմը, այլև երևան հանեց լեզվագիտության ամենակարևոր հարցերում եղած հայացքների անբեկակայելի այն խառնաշփոթությունը, որը տիրում է գիտության այդ բնագավառի ղեկավար շրջաններում: Դիսկուսիան սկսվելուց առաջ նրանք լուռ էին և լուռության էին մատնում լեզվագիտության մեջ գոյություն ունեցող անբարեհաջող դրությունը: Սակայն դիսկուսիան սկսվելուց հետո, արդեն անհնարին դարձավ լուել՝ նրանք ստիպված եղան հանդիս գալ մամուլի էջերում: Եվ ի՞նչ: Պարզվեց, որ Ն. Յա. Մադի ուսմունքի մեջ կան մի ամբողջ շարք բացեր, սխալներ, չնշտված պրոբլեմներ, չմշակված դրույթներ: Հարց է ծագում՝ ինչո՞ւ Ն. Յա. Մադի «աշակերտները» նրա մասին սկսեցին խոսել միայն այժմ, դիսկուսիան բացվելուց հետո: Ինչո՞ւ այդ մասին նրանք հոգ չէին տանում առաջ: Ինչո՞ւ նրանք ժամանակին բացեիքաց ու ազնվորեն չասացին այդ մասին, ինչպես վայել է գիտության գործիչներին:

Պարզվում է, որ ընդունելով Ն. Յա. Մադի «որոշ» սխալները, Ն. Յա. Մադի «աշակերտները» կարծում են, քե սովետական լեզվագիտությունը կարելի է ավելի զարգացնել միայն Ն. Յա. Մադի «ճշտված» քերականի բազայի վրա, որը նրանք մարքսիստական են համարում: Չէ՛, ազատեցե՛ք մեզ Ն. Յա. Մադի «մարքսիզմից»: Ն. Յա. Մադը իրոք ցանկանում և աշխատում էր մարքսիստ լինել, բայց նա չկարողացավ մարքսիստ դառնալ: Նա մարքսիզմի լոկ միայն պարզացնողն ու գոեհեկացնողն էր, ինչպես «պրոլետկուլտականները» կամ «ոսպպականները»:

Ն. Յ. Մադը լեզվագիտության մեջ մտցրեց սխալ, ոչ մարքսիստական փորձույա լեզվի, որպես վերնաշենքի մասին, և շփոփության մեջ գցեց իրեն, խնդրեց լեզվագիտությունը: Սխալ փորձույայի բազայի վրա հնարավոր չէ զարգացնել սովետական լեզվագիտությունը:

Ն. Յա. Մադը լեզվագիտության մեջ մտցրեց մի այլ, նույնպես սխալ և ոչ մարքսիստական փորձույա՝ լեզվի «դասակարգայնության» մասին և շփոթության մեջ է գցել իրեն, խնդրել է լեզվագիտությունը: Հնարավոր չէ ժողո-

վուրդների և լեզուների պատմության ամբողջ ընթացքին հակասող սխալ ֆորմուլայի բազայի վրա զարգացնել սովետական լեզվագիտությունը:

Ն. Յա. Մառը լեզվագիտության մեջ մտցրեց մարքսիզմին ոչ հատուկ անհամեստ, պարծենկոտ, մեծամիտ տոն, որը հանգում է անհիմն ու րեքեամիտ ժխտմանը այն ամենի, ինչ որ եղել է լեզվագիտության մեջ Ն. Յա. Մառից առաջ:

Ն. Յա. Մառը պատմա-համեմատական մեթոդը հղհղան կերպով նշավակում է որպես «իդեալիստական»: Այնինչ, պետք է ասել, որ պատմա-համեմատական մեթոդը, շնայած նրա լուրջ բերություններին, այնուամենայնիվ, ավելի լավ է, քան Ն. Յա. Մառի իրոք իդեալիստական ֆառատար առաջիկը, որովհետև առաջինը մղում է դեպի աշխատանք, դեպի լեզուների ուսումնասիրություն, իսկ երկրորդը մղում է լոկ այն բանին, որ մեջքի վրա պառկեն և գուշակություններ անեն տխրահոշակ շորս տարրերի շուրջը:

Ն. Յա. Մառը մեծամտորեն ֆամահում է լեզուների խմբերի (ընտանիքների) ուսումնասիրության ամեն մի փորձ, որպես «նախալեզվի» բեռնիայի դրսևորում: Այնինչ, չի կարելի ժխտել, որ, օրինակ, այնպիսի ազգերի լեզվական ազգակցությունը, ինչպիսիք են սլավոնական ազգերը, անտարակուսելի է, որ այդ ազգերի լեզվական ազգակցության ուսումնասիրությունը կարող էր մեծ օգուտ բերել լեզվագիտությանը՝ լեզվի զարգացման օրենքներն ուսումնասիրելու գործում: Հասկանալի է, որ «նախալեզվի» բեռնիան ոչ մի առնչություն չունի այս գործի հետ:

Երե լսենք Ն. Յա. Մառին և մանավանդ նրա «աշակերտներին», կարելի է կարծել, որ Ն. Յա. Մառից առաջ ոչ մի լեզվագիտություն չի եղել, որ լեզվագիտությունը սկսվել է Ն. Յա. Մառի «նոր ուսմունքի» հանդես գալով: Մարքսը և էնգելսը շատ ավելի համեստ էին՝ նրանք գտնում էին, որ իրենց դիպեկտիկական մատերիալիզմը գիտությունների, այդ թվում փիլիսոփայության նախորդ ժամանակաշրջանի զարգացման արդյունքն է:

Այսպիսով, դիսկուսիան գործին օգնեց նաև այն տեսակետից, որ նա բացահայտեց սովետական լեզվագիտության մեջ եղած իդեոլոգիական բացերը:

Ես կարծում եմ, որ որքան ավելի շուտ ազատագրվի մեր լեզվագիտությունը Ն. Յա. Մառի սխալներից, այնքան ավելի շուտ կարելի է այն դուրս բերել նզնաժամից, որն ապրում է նա այժմ:

Վերացնել արակշեկյան ուժիմը լեզվագիտության մեջ, հրաժարվել Ն. Յա. Մառի սխալներից, արմատավորել մարքսիզմը լեզվագիտության մեջ,-- այս է, իմ կարծիքով, այն ուղին, որով կարելի կլինե՛ր առողջացնել սովետական լեզվագիտությունը:

**Ի. ՍՏԱԼԻՆ**

«ՊՐԱՎԴԱ», 20 հունիսի